Աճանան

Բնակչություն՝ 197

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 13 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 880 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Հիշատակվում է Խալաջի, Խալաչ, Խըմաճ, Խըմույճ ձևերով: Նախկինում մտնում էր Սյունիքի Բաղք-Աճանան գավառի մեջ և Տաթևի վանքին տալիս էր 6 միավոր հարկ: Գյուղում կար եկեղեցի:
1980 -ական թվականների վերջին գյուղը վերաբնակեցվել է Բաքվից բռնագաղթած փախստականներով: Ընդգրկված էր Սյունիքի գյուղխորհրդի կազմում: 1991թ. տարանջատվել է՝ կազմավորելով ինքնուրույն գյուղխորհուրդ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 800 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 440 հա, որից՝
- վարելահող՝ 199 հա, արոտ՝ 14 հա, այլ հողատեսք՝ 227 հա
- բնակավայրերի հողեր՝ 38 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝119 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 194հա, որից անտառածածկ՝ 21 հա
- ջրային հողեր՝ 2 հա